Ը. ՆՈՐԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ

# ԱՅՐԻ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ ՊԷ՞ՏՔ Է ՈՐ ԿԱՐԳՈՒԻՆ

Այն անկողմնակալ և չէզոք ուղղութիւնը, որմէ կ'ընթանայ Մանզումէ իր արդի շրջանին մէջ, քաջալերութիւն կուտայ մեզի զբաղելու քահանայից կրկնամուսնութեան հարցով և ասպնջականութիւն ակնկալելու թերթին թանկ սիւնակներուն մէջ։

Կուսակրօն և աշխարհական դասերէն բազում ականաւոր անձինք ժամանակէ մը ի վեր իրենց թեր ու դէմ կարծիքները յայտնեցին ու կը յայտնեն օրուան այս հրատապ խնդրոյն առթիւ. մէկ քանի քահանաներ ալ երկչոտ քայլերով խնդրոյն եզերքներուն վրայ ...

[...]

հել, խնամել, հոգալ մեր պարտաւորութիւններն են։ «Ով որ կեանքը չսիրեր արժանի չէ կենալու մարդկային ընկերութեան մէջ։» Այս այսպէս է։ Յիսուս ճգնական կեանքը չքաջալերեց։ Հարսանեաց հանդէսները իր ներկայութեամբ պատուեց, իր անձնուրացութեան վարդապետութիւնը սխալ թող չմեկնուի։ Այո՛, պիտի քամահրենք ֆիզիքական «ես»ը երբ հոգեկան «ես»ի դէմ ամօթալի պայքար մը մղէ։ Հոգին պիտի գերադասենք, բայց մարմինը չպիտի անտեսենք։ Ա՛յս է Քրիստոսի վարդապետութեան կուսանը։ Քանի որ ամուսնութիւնը բնական պէտք մըն է և հոգեկան «ես»ի դէմ երբե՛ք մեղանչում մը չէ, ուրեմն շատ վայելուչ է որ քահանաներն ալ զուրկ չմնան երկրորդ ամուսնութեան սուրբ, բնական և օրինաւոր վայելքներէն։

Տիեզերքի սքանչելի կազմակերպու...

[...]

կղերին նիւթական կամ ֆիզիքական հոգերը փարատել և ո՛չ թէ նորանոր դժուարութիւններ յարուցանել։ Սատարկուլի թերեւս թէ, «նիւթական բարելաւ վիճակը հոգեկան կոչումին համար խայծ մը ըլլել հոգեկան տկարութիւն կը նշանակէ»։ Ո՛չ, ո՛չ, սխա՛լ է այդ առարկութիւնը։ Հոգեկան կեանքը դաւանիլ, սիրել ու գրկել չնշանակեր նիւթական «ես»ը անտեսել։ Ապա թէ ոչ անձնասպանութիւնը ոճիր մը նկատուելու չէր։ Մեր մարմինը նուիրական աւանդ մըն է մեզի Նախախնամութենէն. զայն պա...

[...]

ամբողջութեանը մէջ, իր ուխտերուն հաւատարիմ կղեր մը, և ո՛չ աշխարհէ հրաժարելու ուխտած սակայն բազմաթիւ տաճարէն դուրս չելնող դասակարգ մը։

ՀՄԱՅԵԱԿ ՔՀ. Ն. ՊԱԽԹԻՅԱՐԵԱՆ

ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

# ՁՈՒԽ՛ՐԹԸ ԹԷ ԽՈԺՈՐԸ ԼՈ՞ՒՐՋԸ ԹԷ ԽԵՂԿԱՏԱԿԸ

Գաւառական շատ մը գիւղերու և նոյն իսկ քաղաքներու մէջ դպրոցական աշակերտները հանդէպ ուսուցչին չեն այնքան համարձակ, որքան են մեծ քաղաքներու վարժարանաց աշակերտները։ Այս վիճակը որ աշակերտներու ընտանեկան շրջանակի մէջ վայելած համարձակութեան սահմանին կամ հոն իրեն տրուած կրթութեան աստիճանին կը համապատասխանէ, բնական արդիւնքն է նաև ուսուցչին դպրոցական յարկին տակ աշակերտներու հետ ունեցած վարմունքին,

[...]



# ՀԱՒՍԲՈՒԾՈՒԹԻՒՆ

ՀԱՒԵՐՈՒ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

[...]

ջին օրերուն մէջ հաւկիթները թխսամի երեւոյթներուն կ'ենթարկէին, սակայն թխսամի տեւողութիւնը երթալով կը նուազեցնէր ձուելքի մասին մեր ունեցած յոյսերը, քանի որ հաւկիթներէն առաջ եկող ածխային թթուն, ծծուելով մեքենաներէն և օդին ապականելուն պատճառ ըլլալով, զարգացումը անյաջողութեան կ'ենթարկէր։

1844ին Քուրպվուաի գործարանատէրներէն Մ. Պիւ նոյն տարւոյ ցուցահանդէսին վաթսուն հաւկիթ պարունակող թխսող մեքենայ մը ղրկեց։

ՀՐԱՆՏ Ս. ՏԱՆՑԻԿԵԱՆ
Մասնագէտ
երկրագործական գիտութեանց

[...]

աւուղիղ միջոցներ ի գործ դնելու յաջողելու համար, այլ արդէն իր շուրջը կ'ստեղծէ քաղցր և սիրուն մթնոլորտ մը աշակերտներու տաք և ոգեւորիչ շնչումը բարեխառնուած, և համակիրներու գործվանքներով պաշտպանուած։

ՆԱՀԱՊԵՏ

ՀՄԱՅԵԱԿ ՔՀ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ա. Բ. Գ. ՀԱՏՈՐՆԵՐԸ

Նոր տպագրութեամբ ի լոյս ելած են, կը ծախուին Կ. Պոլիս Սիւմպիւլլի խան Միհրան էֆէնտի Փափազեանի դրատունը և ի Կալաթա Գուրշունլու խան Սագաեան տպարանը։ Գին Ա. հատորին 3, Բ.ինը 5, Գ.ինը 5։

% 30 ԶԵՂՉ 50—5

ՇՈՒՐԱՅԻ ՊԱՀՐԻԷՏԷՆ

Գալէի Սուլթանիէտէ պուլունան տօնանմաի Հիւմայուն ճէնապը Միւլիւքեանէտէ մէվճուտ զապըթան վէ ասաքիրի պահրիէի Շահանէնին էրզաք մուգավէլէնամէսի սէնէի հալիյէ իյլուլուն նիհաեէթինտէ միւնգազի օլաճաղը ճիհէթլէ պիր սէնէ զարֆընտա լիւզումի օլաճագ մէզքիւր էրզաք վէ սաիրէնին թալիպինէ իհալէսի զըմընտա աղըսթոսըն 15ինտէ մահալլինէ միւնագասաըննա իպթիտար իլէ 20սինտէ գարարը միւվագգաթը վէ 30ընտա տախի գարարը գաթիաի իթա օլունաճաղը Պահրը Սէֆիտ ումում ֆիլօ գօմանտալըղընըն իշարընտան անլաշըլմագլա, գիւքը օլունան էրզաք վէ սաիրէնին իթասընա թալիպ օլանլարըն ուսուլը տայիրէսինտէ մահալը մէզքիւրտէ իճրա օլունաճագ միւնագասատա հազըր պուլունմալարը իլան օլունըր։

Ֆի 7 Աղըսթոս 1322 1—3

ԻԼԱՆ

Սարրաֆ Ֆիլիբ Անադոնսթիտի զէվճէսի մատամ Իսփաաիանըն Պէյօղլու Պիտայէթ մահքէմէսի պիրինճի Հուգուգ տաիրէսի իլամը իլէ մաթպուաթը էճնէպիյէ գալէմի խիւլէֆասընտան իզզէթլու Փէրթէվայիֆ ըիմմէթինտէ մահքիւմիւն պիհի ալաճաղը օլան մէպալիղի մալիւմէնին թէմինը իսթիֆատէսի զըմնընտա մէտեուլը մուամիլէյինէ էօհտէի թէսարրուֆընտա օլուպ, տայինէի մէզպուրէ նամընա ֆէրաղը պիլ վէֆա իլէ մուգայյէտ վէ ֆիրուխթը սալիֆիւզզիքր իլամ իլէ մահքիւմ պուլունան Պէյօղլունտա Հիւսէյին աղա մահալլէսինտէ Լալէ սօգաղընտա քեաին արզէն 12 վէ դուլէն 30 արշըն արսա իւզէրինէ մէպնի վէ տէօրթ գաթտան իպարէթ սաղիր ու քէպիր 10 օտա վէ 8 սօֆա վէ մաթպախ վէ գուեու վէ թէրաչէյի միւշթէմիլ Իլիաս Չէլէպի վէ Ահմէտ քէթխիւտա էօվէյի քէրիմէսի Իսթիմհան խաթուն վագֆընտան 7-9 նումէրօլար իլէ մուրագգամ պիր պապ քեարկիր խանէնին թարիխը իլանտան իթիպարէն 15 կիւն սօնրա պիլ միւզայէտէ ֆիրուխթընա թէշէպպիւս օլունաճաղընտան, թալիպ օլուպ տահա զիյատէ մալիւմաթ ալմագ իսթէյէնլէրին Պէյօղլու Իճրա տաիրէսինէ միւրաճաաթ էյլէմէլէրի տաիրէի մէզքիւրէտէն իլան օլունըր։

Ֆի 8 Աղըսթոս 1322

[...]

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Ֆ. ԳԱՅԱՅԵԱՆ